


၈၂၅၆၆၆

Դուք գտա՞յք խաղաղ հանրու
 ծիրը խաղաղ կյանքի միջև :
 Լիցքոյոյ վերաբերեալ նաեւ
 կոմսը եւ իր, զրոյցեալ խաղաղ
 — ջնջողին արեւելուցեալ, Դաւա-
 թիս Կոստանդնուքի շատեւ թիւ
 198, Կոստան. Բաշար գրասեն-
 եակը :
 Հանրու ծիրը վիճարուած նա-
 լակ ջրերդ անոր :



Լ Բ Ա Ք Ի Բ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ቀጠረዱ ይኸው ነው፡

Եւրոպայէն ալ հաշտութեան ձայն
ներ կուգան : Անգղիոյ ելուտոյցը և
ներքին գործոց նախարարները լի-
վերբուրի մէջ իրենց խօսած ճառերով
խաղաղական յայտադրութիւններ
ըրին : Առաջին ծանոցը թէ Անգղիա
խաղաղութեան փափաքանօք դեմ
պանախորհուրդը մտած էր, որոյ ա-
ռաջարկութիւնքը չէին ընդունուած
Թուրքիոյ կողմէն : «Կարծեմ որ, բաւ-

Գաղաքակնոթեան վրայ այս օրերս քանի մը տետրակներ հրատարակեցան, որոց մէջ ամենէն նշանաւորը կրնայ համարիլ «Պատասխանատուութիւնը», վերնագրով ելած Գաղղիերէն գրուած մը: Ասիկա համապատասխան գլոխներու կողմէն իրարու ուղղեալ մտերմական կամ գաղտնի նամակներ կը պարունակէ, որոց հեղինակները գուշակել զժողովին չէ: Իկնութիւն, Նովիբրոյ, Սերպիոյ և Գալատաղի իշխանները, Սլավեան մասնախումբեր, Ռուս նախարարը և բարձր պաշտօնաւորներ, մինչև իսկ թաւաճող գաղութներու մեծ գլուխներն են: Երբեք հանուած են: Սխալմաշուք լըրադիւր կըսէ թէ Սլավեան կուսակցութիւնն յիշեալ նամակներուն վաւերականութիւնը կը ժխտէ: Այս բնական է. կը յարէ նաև թէ յիշեալ տետրակը ջուրի մէջ ինկած ուռմբի մ'աղդեցութիւնն ըբաւ: Այսու ամենայնիւ նամակները հետաքրքրական հատուածներ կը պարունակեն: Բերայէն 1872 ին Վիեննա գրուածները շարունակ Պոլսապարագ ինդիքոյն վրայ կըստնի, և հեղինակը (հաւանականաբար իկնաութիւնի զօրավարը) կը զայրանայ Միտհաթ փաշայի և Խալիլ Շէրիֆ փաշայի զէմը: Աւալիկն էրուպական

“Տարակից չունինք որ պարագայները դաշնագրութիւններն և այլ պատճառներ իրաւունք կուտան և մինչև իսկ պարտք կ'դնեն մեր վրայ թուրքիոյ ներքին գործերուն զբաղիլ՝ նոյն ոգւով և տեսութեամբ որ իտալիոյ Սպանիոյ և այլ երկիրներու գործոյն զբաղեցանք։ Բայց համակրութեան ու միջամտութեան մէջ մեծ քայլ կայ․ այդ քայլը պէտք չէ աւնուլ առանց զգուշաւորութեան, անոնց վտանգ ըլլալով թէ օգտակար պիտի ըլլա՞ն։ Սպի եղաւ այն հմնական սկզբունքն՝ որոյ վրայ կանխաւորեց կառավարութիւնն իւր գործողութիւնն արևելեան մեծ ինդորոյն

«Հիմա զեւթերուն ստանալիք դարձուածքը ժայրագոյն կարևորութիւն մ'ունի ։ Երկիւղալից անձկութեամբ պիտի քնենք զանոնք ։ Բայց փառահեղիք, որ մինչև ցայդ ինչ սկզբումը որ վարուեցանք, այսուհետև աշնոյն սկզբանց համեմատ պիտի վարուինք ։ (Ճափահարութիւնք) ։ Սակայն մեր վարմունքը ճշդիւ նոյն պիտի ըլլայ ։ Այնպիսի բան մ'է պս որ պարագայներէն կ'ստուան ունի ։ Մէկ մարդ մը իւր սկզբանց հակառակ վարուած ըլլար թէ, յունվար ամսոյ մէջ կըրկուսոյ (բաւարըս) հագնի ու յուլիսի մէջ ալ չհագնի ։ Հետևաբար մէկ մարդ մը հակասական ընթացքի մէջ գտնուած չհամարուիր թէ իւր ընթացքը՝ գտնուած պարագայից համեմատ տարբերի ։ Բայց աներկօր տղիք, որ գեսպանատնիւրհըէն ետ դարձող մեր պաշտօնակցին հետ խորհարակցելէն և խնդրոյն մանրամասնութիւնները նկատելէ ետև՝ կարող ենք խորհրդարանին բացուած ժամանակ պատասխանել և պաշտպանել ։

այն քաղաքականութիւնը, որ պարտք կը համարին քաղաքականութիւնը վեհապետին ու երկրին : (Երկար ծափահարութիւնք) :

Սըր Սթանֆօրտ Նորթ քթ յունիք 26 ին ալ Լիվերբուլի մէջ կոչուելի մը ներկայ գտնուելով, ըրա՞ծ ատենախօսութեան մէջ դարձեալ յայտնեց թէ գետնախորհրդին արդիւնքը պարտութիւն կամ ձախողութեան չէր, այլ իրապէս օգտակար արդիւնք մը ունեցաւ, որովհետեւ տէրութեանց իրարու դէմ ունեցած կռիւներն ու նախանձութիւնները փարատեց : Վերադարձութիւնը կրնայ ապահովիլ, ըսաւ, եթէ խղճի մտքը զգուշացուի գրգռիչ յայտարարութիւններէ ու գործերէ՝ որք կրնան պատերազմը ներու թեւադրել զուրիշները :

Գաղղիական Տէպա լրագիրը կը ծանուցանէ թէ Օսմանեան կառավարութիւնը իւր հայտարար գիտաւորութեանց գրաւական մը տալ ուզելով Եւրոպական տէրութեանց, Գաղղիայէն սպաններ խնդրեր էր իւր գաւառական ոստիկանութիւնը կազմաւորելու համար : Միանգամայն երբեք մըտնից տեսնուց մը, որպէս զի տրոց հաւաքումը կազմաւորելու գործին հսկէ վերջին առաջարկութիւնն Անգլիոյ ալ եղեր է :

Բայց, կրնէ թան լրագիրը, Գաղղիոյ կառավարութիւնը չէ ընդունէր Բ. Դրան խնդիրն, այս պատճառաւ որ գետնախորհրդի միաձայնութեամբ սոյն առաջարկութիւններն ըրած էր Բ. Դրան և չէր ընդունուեր, ուստի Գաղղիոյ կառավարութիւնը տէրութեանց մէջ գոյացած համաձայնութիւնը չարեւը համար վերջին ծայր զգուշութեամբ պիտի վարուի :

Կրտսի թէ Անգլիա ալ, անշուշտ մի և նոյն նկատողութեամբ, չէ ընդունէր Բ. Դրան խնդիրը :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուրէշ 1 փետր.
Նախարարք ամենը մէկէն հրաժարուկան տունն՝ ի բաց առեալ Պ. Ժան Պրաթիւնն :

Հում 2 փետր.
Խոր Սալիսպըրի այսօր մեկնեցաւ Հոմըն ի փարիզ, ուր օր մը պիտի կենայ :

Իննամիջ քորապարն ալ այսօր Պրինտիլի հասաւ, և վաղը պիտի մեկնի :

Ճէզայի 3 փետր.
Երէկ Ֆիլիպինի առջև փոթորիկ ելեւելով Օսմանեան վաճառական նաւ մը ծովասլաց եղաւ :

Հում 3 փետր.
Պապին մահուան զրոյցը սուտ կը հանուի :

Վիլնա 3 փետր.
Փութաճան թղթակցութիւնը կըլան կառավարութեանց մէջ ներկայ ձկտեալ վիճակը քիչ մը թուցնելու համար :

Սէքսանդրիա 3 փետր.
Աւարտ—Հունգարական գործակալն (աճէնթօ) ինքզինք սպաննեց : Պատճառը ղեռ անձանթն է :

Վիլնա 4 փետր.
Պ. Ծոտորտի և Քորթի կոմսերը մեր քաղաքն հասան, ուր Իննամիջ քորապարն ալ վաղը կ'սպասուի :

Բեդրսպուրի 4 փետր.
Կորստընի իշխանին այսօր զրկած մէկ շրջանականը կըսէ թէ Ռուսիոյ կառավարութիւնն որոշում մ'ընելէ առաջ, Արեւելեան խնդրոյն ներկայ նոր կերպարանքին մէջ ալ Եւրոպիոյ համաձայնութիւնն անկից՝ պահելու փափաքով վառեալ, փարիզի դաշնագրութիւնն ստորագրող մեծ ուկրաինացի քով ունեցած գետնախորհրդին կը յանձնէ իմանալ թէ իրենց փաճայն բազմանց փութելոյն մերժուելուն վրայ ինչ ընթացք բռնելու զիտաւորութիւն ունին :

Լոնտոն 5 փետր.
Թայմ լրագիրը կըսէ թէ Կորստընի շրջանականը ինքզինք ինքզինք չ'իտարտեալ : Անգլիոյ պատասխան երկրպագի չէ, իւր գործին ազատ ինքն ինք, իւր սեփական շահերն և անհատական ընդհանուր շահերը պիտի դիտարկէ : Եթէ Ռուսիա գահաձկն

ժառար գործէ, պատասխանատուութիւնն իւր վրայ պիտի մնայ :

Չէրնայէ քորապարն վեց ամիս Ռուսիա պիտի կենայ իւր ընտանեաց հետ :

Պրին 5 փետր.
Ռուսաց կոստանդին մեծ դուքսը հոս եկաւ, և Գերմանիոյ կայսրն այցելութիւն տուաւ անոր :

Փարիզ 5 փետր.
Խոր Սալիսպըրի այս առաւօտ փարիզ հասաւ :

Լոնտոն 5 փետր.
Օսմ. քոնս. 12 7/16
Փոթ. 1863 14 1/2
" 1869 13 1/2
" 1871 —
" 1872 23 1/2
" 1873 13 1/4
Եղիպտ. 30 1/4
Անգլ. քոնս. 93 3/4

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ կայսերական հրամանաւ Բարձր Միտհաթ փաշան Եպարքոսութեանէ լքնալով Պետական խորհրդոյ նախագահ Բարձր, Էտէմ փաշան Մեծ-Եպարքոս անուանեցաւ :

Իսկ Միտհաթ փաշան տէրութեան երկրէն հեռացնել արժան դատուելով, իւր ընտրութեամբն Խալիլի Պրինտիլի քաղաքը զրկուեցաւ իղէտտին շոգենաւով իւր ընտանեաց հետ :

Դարձեալ կայսերական հրամանաւ Ճէվեթ փաշա՝ ներքին գործոց նախարար :

Շէհր Էմինի Գատրի պէյ՝ վէզիրութեան ատտիճանաւ՝ Պետական խորհրդոյ նախագահ :

Էտէմի կուսակալ Ասիմ փաշա՝ դատական գործոց նախարար :

Փարիզի գետնայն Սալիսպ փաշա՝ Ռուսոնգի կուսակալ :

Հէրնէի կուսակալ Ալի փաշա՝ Էտէմի կուսակալ :

Պետական խորհրդոյ անգամ Զամիլ Թովանէս Էֆէնտի՝ Պալայի աստիճանաւ՝ Առեւտրական գործոց նախարար :

Ահմէտ Մուխթար փաշա՝ Կարնոյ բանակին հրամանատար :

Կարնոյ նախորդ կուսակալ Սամիհ փաշա Կիրիտի կուսակալ :

Հայէպի կուսակալ Խուրշիտ փաշա Մեծ-Եպարքոսութեան Միտհաթ փաշա :

Նախորդ Միտհաթ փաշան Էֆէնտի Պետական խորհրդոյ անգամ Ռուսոնգի կուսակալ Ռիֆաթ փաշա Հայէպի կուսակալ :

Բերայի թաղապետութեան նախագահ Քոսթաքի պէյ ներքին գործոց նախարարի Միտհաթ փաշա :

Իսթինաֆի ատենին նախագահ ներէն Սաքըր Յոհանէս Էֆէնտի Հասարակաց կրթութեան նախարարի Միտհաթ փաշա :

Ահմէտ վէֆիք Էֆէնտի՝ Երեսփոխորդ առեւտրական նախագահ :

Առեւտրական գործոց նախարար Հալիթ փաշա Երեսփոխորդ անգամ անուանեցան :

Դարձեալ կայսերական հրամանաւ Արքուէնի պալատան Դերիք Սալիտ փաշան զինուորական վարժարանաց անօրէն անուանեցաւ փոխանակ Սիլվէյման փաշային, որ Հէրնէի կայսերական գործոց հրամանատար անուանած է :

Վանս. Սաֆիլթ փաշան հետեւեալ շրջանականը զրկեց Օսմանեան գետնախորհրդի :

Բ. Դուռը մեծ փութով կաշի խալի Սահմանագրութեան արամագրած բարենորոգումները գործադրելու : Արդէն քանի մը կարեւոր տնօրէնութիւններ եղան սոյն նպատակաւ :

Հէրնէի գաւառը վերստին Պոսնիոյ հետ միացաւ և Կոստանդ փաշան, որ հայապէս է, նոյն կուսակալ :

կալութեան Միտհաթ փաշան անուանեցաւ :

Բուսթիլի մէջ նոր կուսակալութիւն մը կազմուեցաւ պատմական ֆոսօփո անուամբ, որոյ մէջ պիտի բովանդակին Նիլ, Շարքէյ, Բրիդընտ և Իւսքիւպ : Սոյն կուսակալութեան Միտհաթ փաշան անուանեցաւ վասա Էֆէնտին, որ լատին է :

Սալիս փաշա յայն ալ Միտհաթի ատտիճան Բարձրանալով Օսմանեան Արշիպիդուքոսի կղզեաց կուսակալ անուանեցաւ :

Բ. Դուռը կազմուած յանձնախորհուրդը Սահմանագրութեան բղիսալ օրէնքները պատրաստելու կաշխատին ամենայն փութով :

Վերջապէս անգաղար կաշխատինք այնպիսի դրութիւն մը հաստատուել, որ խիստ մօտաւոր ապագայի մը մէջ Օսմանեան կայսրութեան համայն ժողովրդոց բարեկեցութիւնն ու ծաղկումը պիտի ապահովէ :

Տպագրական նոր օրէնքն, որ տակաւին քննիչ յանձնաժողովոյ բովէն անցած չէ և նոր հաստատուելիք երեսփոխանական և ծերական ժողովոց հաւանութեանը կըկարօտի, հետեւեալ արամագրութիւնները կը պարունակէ լրագրաց նկատմամբ :

Ամեն անհատ, որ իւր քաղաքային իրաւունքները կը վայելէ, կրնայ լրագիր մը հրատարակել, միայն թէ հրատարակելէն ամիս մ'առաջ պէտք է իմացնէ Մեծ-Եպարքոսի Միտհաթ փաշան զիւանին՝ հրատարակելիք թերթին անունը, նպատակը, տնօրէնին անունը, և այլն, Առանց այս պայմանին հրատարակեալ լրագիր մը հինգէն տառն և հինգ լիւրա տուգանք վճարելու պիտի դատապարտուի : Օրինօք դատապարտեալ յօդուածներ պարունակող լրագիրք քաղաքային ատենից առջև դատի պիտի ենթարկին, և տնօրէնը տուգանօք կամ բանտարկութեամբ պիտի պատժուի : Իսկ լրագրաց դադարման կամ խափանման պատիժը պիտի վերնայ, ինչպէս նաև դրօշմի տուգոր :

Երկրային գործոց նորընտիր նախարար Բէնֆ փաշան ուրբաթ օրը Կ. Պոլս հասաւ Կիրիտէն, և նոյն օրը վեհ. Սուլթանին ներկայանալով իւր պաշտօնը վարել սկսաւ :

Կրտսի թէ անցեալ շաբթուան մրիկներուն միջոցին հարիւրի չափ առագաստանաւ կ'ըսուեր են Մարմարայի և Սև ծովու մէջ, Հինգշաբթի օրն ամուլս բերող Անգլիական շոգենաւ մը ցամաքն ինկաւ Ենտի Գուլէի մօտ :

Սպարապետի դուռը նոր յանձնարում մը մը կազմուեցաւ, կամաւոր զօրական գրելու համար, առանց ազգի և կրօնի խտրութեան :

Պալատիոյ անցից քննութեան համար Սատուլահ պէյն նախագահութեամբ կազմուած յանձնախումբը իւր պաշտօնն աւարտած ըլլալով, Կ. Պոլս պիտի վերադառնայ Թիւրքիէն :

Բ. Դուռը շրջաբերական մը զրկեց գաւառաց կուսակալներուն, յիշեցրնելով թէ օտար տէրութեանց հետ կնքուած դաշնագրութեանց համեմատ, Թուրքիոյ մէջ բռնուած և Օսմանեան ատենաներէն դատապարտեալ օտարազգի ոճրագործներն իրենց պատիժն Օսմանեան երկրին մէջ պիտի կրեն, և ոչ թէ իրենց հիւպատոսաց յանձնուին :

Բ. Դուռն հեռագրով իմացուց Լոնտոնայի Օսմ. գետնախորհրդին թէ Եփրատի հարկը, որ Անգլիոյ Պաշտպան անուագ յանձնուած է, 1864-ի և 1871-ի փոխառութիւնները կնքողներուն չ'պիտի յանձնուի :

Վանս. Ստեփան փաշա Արաւսեան, որ Դանուբեան բանակաց առողջապահական միջոցներն ու հիւանդարանները քննելով պէտք եղած կարգադրութիւններն բնաւ պաշտօնով այն կողմը գնացած էր, անց'ալ շաբթու Կ. Պոլս վերադարձաւ :

Տիրանականութեն դեկտ. 15 թուով մեզ ուղղուած նամակ մը, որ փութիլ խմբագրութեան միջոցաւ շաբաթ իրիկուն ձեռու ընկաւ հասաւ, կը ծանուցանէ թէ Գիւրտերը Սատուի Հաջօ գիւղաքաղաքին Սանտրը Էմինի Յակոբ աղայի տունը կ'սխալով թէ զայն և թէ անոր Սարգիս անուն եղբորորդին չարաչար սպաննէր են :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍՉԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

24 յունի. երկուշաբթի իրիկուն	13, 4
25 յունի. երեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	13, 4
ժամ 7 1/2ին	13, 2
Բուսթիլի երկաթուղեաց	Փր. 36
Թղթագրամ	Իւր. 170

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՊՈՑ

Կ. Պոլս 24 Յունիս

Ստիթէ Ժէնէրալի բաժ. Անգլ. լիւր. 3.	
Փոխանակութեան	2,20
Կ. Պոլսոյ Պանքային	3,15
Քրէտի Ժէնէրալ	3,07
Քրէտի Օսթրո-Թուրք	
Փոթ. 1863	Ֆր. 76
" 1865	78
" 1869	68
" 1872	23
" 1873	67

Թրամուայ Օսմ. լիւր. 1 48

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

24 Յունիս

Անգլ. լիւրա	դր. 109 33
Նաթուրն ոսկի	87 28
Իմպէրիալ Ռուս	89
Գրքերից	31 25
Հինգ ֆրանք	—
Հինգ նոց	111 20
Պրինս	163

Ս.ՉԳԱՅԻՆ

Տարիէ մ'ի վեր մայրաքաղաքիս մէջ տիրող դրամական տագնապին օր քան զօր ծանրացումն և առեւտրոց դադարումն ինչպէս ամեն բարեգործական հաստատութեանց՝ նոյնպէս և աւելի Ս. Փրկչի ազգային հիւանդանոցին հասոյթները նուազեցնելով, իւր վերջին հաշուեցոյցին (1876 ապրիլ 30) հրատարակութեանն ի վեր յիշեալ ազգային պատասպարանըն արքան զօր ներդրութեան 'ու կարօտութեան մէջ իյնալով վրայ է :

Այս տխուր վիճակը մասնաւորապէս ազգային մէջ աւելի ծանրանալու և դառն հետեւանքներ յառաջ բերելու երկիւղ տալով, քանի մը բարեսէր ազգայինք տնօրէն մասնախորհուրդ մը կազմելով որոշած են յառաջիկայ ուրբաթ գիշեր մեծ պարահանդէս մը տալ, մայրաքաղաքիս ամեն ազգաց երեւելաց տոմսակ դրկելով :

Աներկմիտ ենք որ կարող ազգայինք կը փութան մասնակցիլ այս մարդասիրական գործին, որ 500էն աւելի խղճաւորաց ապրուստ մատուցաւ :

բարերու սահմանուած է այսօրեայ ժամանակին մէջ :

Ահաւորակ տնօրէն մասնախորհրդաց Մեծ. անդամոց տնուանքն .

Յ. Բաղդադեան	Էֆէնտի Ատենապետ
Ս. Զուռնդ	Գանձապետ
Յ. Մէրեքեմ-Գուլի	Քննիչ
Գ. Գարակէօզեան	Քննիչ
Ս. Սրվաճեան	Քննիչ
Պ. Միրանէտեան	Քննիչ
Յ. Տէրունեան	Քննիչ
Պ. Միսաքեան	Քննիչ
Գ. Ալատուլլահ	Քննիչ
Լ. Գարամիսեան	Քննիչ
Գ. Սէրիմպէճեան	Քննիչ
Ռ. Գրիգորեան	Քննիչ

Բերկրութեամբ կը լսենք թէ խորման սրբազան կայսերական հրամանաւ Ոսմանեան ծերակուտի ժողովին անդամ տնուաներ է 10 հազար զրուշ ամսականաւ :

Փռնշի մէջ կը կարգանք թէ Պաղչէճիք բնակեալ 50 տան չափ հասունեան Կաթիլիկ հայերն՝ իրենց առաջնորդ Այվազեան Բովսէփ վարդապետին հետ Հայաստանեայց եկեղեցւոյ գերիւր վերադարձեր են :

Ինչպէս որ շաբաթ առուր թուով ծանուցեր էինք, Պատրիարքարանի Գաբու Բէհեասի Էֆէնտին շաբաթօրը Ոստիկանութեան դուռն երթալով՝ Մաղլմեան վարդապետին քեռայր Տ. Ս. Էֆէնտին և անոր քենեկալը բանտէն արձակել տուաւ երաշխաւորութեամբ, և Մաղլմեան ալ պահանջելով Պատրիարքարանի զրկել տուաւ, որպէս զի հոն քննուի իւր ըրած ամբաստանութիւնն և անոր շարժառիթ եղող պարագաներն :

Պատրիարքարանի և Երեւանի հրապարակաւ յայտարարուի. շաբաթ 1890 թ. Դեպք, Գաբու Էֆէնտին և անոր քենեկալը 1876 թ. Դեպք 13 թ. Դեպք :

Ի բանադատից մին բարուր ասացեալ. « Սեփեանք ոք խօսել և դատել գիտէ, բայց ուղղաթուղթիւն և ուղղադատութիւն ըստ Աստուծոյ՝ հասարակաց պարգեւեալ չէ » :

Պ. Հէքիմեան թէ առ ի՛նչ մատենալ զինքն ի շաղկապութիւն գրչի, ոչ թէ միայն ինքն գիտէ այլ և գիտեն բազումք ոչ յայլ միտս՝ քան յօգուտ անձին, զի իւրոյ — իրբ. օտարական ոք ի բազմութիւն, առանց նիւթապէս խմանալու գէշան. զամանայ ներքնայ ազգին և եկեղեցւոյ, ընդդէմ հոգւոյ և խնային մաքրուի :

Սակաւուց մասնց յայտնի թէ սա ո՞վ և որք ծանեանք զայս ասեն, եկեալ սորա ի կալկաթա իրբ. բանակատար ոմանց Թիֆլիսեցւոյ, որոց կարծի զոյ կտակեալ հրիտակ նախկին մեռելոց, որպէս թէ վերատառցեալ տարցն ցժառանգաւորսն, որոյ զելից կատարածն չէ մեզ խօսիլ, այլ բուռն հարեալ զաղճատանացն՝ մնայ մեզ ընդդէմ լինիլ ի խրատ այլոց :

Վկայեն փորձաւորք, զի ի գնալն անդիպուող օտարականի ուրուք յանձնաթի վայր, մանաւանդ գործնական խնդրով, կարօտաւորի տեղական իմն ծանօթի՝ յատ աշնորդել զինքն յանձնարար ուղիս, և կալ ձեռնառու յամենայն դէպքս զժողովարան, ըստ որոյ և հանգամանք Պ. Հէքիմեանի, ոչ անքնին կարեալ յեկեղեցական տեղւոյն՝ որք ընդ իշխանութեամբ իւրում ունի զաւանդատուն եկեղեցւոյ, ուր պահին յիշատակագիրք, պատճէնք նամակաց, օրինակք կտակաց, և թղթեանք հնոց և այլն, որովք և թըւսի ոչ անարդիւն գտեալ հեղինակին ուստի և ի տրիպուր եղելոց, և ի յոյս ապառնելոյ անուանելի շնորհաց եկեղեցւոյնի սրբալ զորին կողմնակալ և անարդար ընդդէմ այլոց և հոգւոյ իւրում խի, մինչ հնար և ինքեան զայս՝ այլ իմն սո՞վ, ուղիղ արտադրութեամբ մտաց, հաճելի Աստուծոյ և մարդկան :

Բարեբախտ զորքաւոր խմբակի, ընդ որ և համապատասխանեալ աստի, որպէս զի զորքան հրատարակեն ևայլն : Առ այս հարցանի ի բանադատէն զի Արշալոյս ի Հնդկաստանի ունի զհամապատասխանիս բազում. գործի ի նոցանէ խօսի, թող յանուանէ որոշեաց զհեղինակըն ստույթեան, և կայց զմիջանակն : Երկրորդ, հարցանի թէ զինչ պաշտօն լրագրաց՝ եթէ ոչ կերպիւ իւր լրտեսութիւն և բերան հասարակաց — հրատարակեն՝ և զոր ալ ու ձախ հաղորդեն. ի հեռաւոր վայրս՝ պահեն տեղակալ, և ուր ինքեանք անձնուհոս, նոքօք ինքն զպաշտօն իրեանց ստանձնալ. խօսին զարեւելիլ, զարեւմտից, զհարաւոր և զհիւսիսայ, որով և ծաւալեն զլուսաւորութիւն և ծանօթութիւն մեծ յաշխարհի, բայց արարաւորապէս օգուտ սորին և արժէք ո՞րքան ի լուսաւորեալ ազգին արտադրողի, այնքան ի տան յիմարութեան մերում նսեմ և խաւարին : Արդ՝ եթէ լրագիրք և հրատարակիչք՝ ըստ տկար արտադրաց Հէքիմեան բանադատի, նախ ինքն յանցաւոր ի գրելն ստույթեանց, և ապա Մասիս ի հրատարակելն հաւատով սակայն ըստ մերում՝ ոչ այնպէս, այլ թէ լրագիրք և հրատարակիչք՝ ըստ լրոյ ազատեն ի ձեռնարկս իրեանց. բայց և այնպէս բացառութիւն մի և ի սա անկաւի, այսինքն զի հրատարակութիւնք չիցեն օգտի անձին, քինու, անձնական նախանձու և ներհակ օրինաց արդարութեան, այլ լինին ի շնորհիւն և յօգուտ ազգի մարդկան, մանաւանդ և տան ազգայնոյն :

Երրորդ հարցանի ի բանադատէն — զի եթէ ընթերցեալ զԱրշալոյս, և գտեալ ինչ ստույթիւն ինչ կամ ինչոր անձնական, թող որպէս պարուն և ուղղապէր քրիստոնեայ՝ յառաջ մատուցեալ ցուցն հրապարակաւ իսկ եթէ ոչ զիտացն զի Ուիկիման ոչ ցամաքի բանիւ հակառակութեան իւրոյ, և ոչ ինքն բաւ է կեղծաւորութեամբ կայնուլ զառաջս ճշմարտութեան, զի զոր ինքն ստէ՝ այլք ընդ բերանց ժամանակին հաստատեն. ուրեմն թող չեղծ արարեալ ազգին՝ յինքն ամբիւրեացն զառարկայ խնդիր կեղծ ազգասիրութիւն իւր :

Մին ի թղթակցաց Արշալոյս աստ մեք համարումք ի բազմաց տանց հետի, և այդ իրաւանամբ յասնել, զի յոչինչ ժամանակ մտթացեալ նորա ունել ի գրութիւնս մեր ստույթիւն, նախանձ, կամ կիրք ատելութեան, մանաւանդ և զոր գրեալ՝ որոց և զհրատարակութիւն ի հաճոյս իւր ապաստանեալ, է՝ զոր հրատարակեալ, և է՝ զոր (յաշնէն Հրէից) ոչ, որպէս և այն ու մեզ ծանուցեալ զանչահութիւնն. ահա իրաւունք՝ ընդդէմ իւրաւանց, և ներդրութիւնն ընդդէմ ներդրութեան բանից յաշնադատին, որ սպառնայ փակել զբերան իրաւաբանից, կարճել զգրիլ լրագրաց, և ընդլայնել զարդաւանս անուղղակից յասպարէզ ևս քան զկս վատթարութեանց. ո՞ր այն մեղապարտ՝ որ ջատագովէ զօրէնս օրինաց դատաստանի, որ սլասթօք չափ դնէ անխրատից. զի որ սիրէ զխաւար՝ ատէ զլոյս. զի խաւարն է ոչ սակաւ նպաստաւոր ոճրապօրծաց :

Բաղդաւորութիւն մեծ լինել մեզ այսր, եթէ (որպէս երբեմն) ունէ աք ի միջ խաւական և անաշտ լրագիր մի, ըստ Արշալոյս, Մասիսի և այլոց ազգային լրագրաց, թերեւ որպէս ոտիկան հսկելով ի վերայ անուղղակից, որոց զխոսք և զխոսք անհաճոյ վարուց զիմարութեամբ հարթէին, և յայնժամ մերձաւորաց և հեռաւորաց ազգայնոց միօրինակ յայտնելը ճշմարտութիւն ի ստոյ. բայց տարաբաղդապէս որոյ ի չինիլն՝ ոտք ընդ գլխովք խառնակեալ. քաղաքացին լսէ, և զըրսեցի օտարականն ըստ բնաց իւրոց հարկանէ զթմրուի իւր, պարէ ինքն՝ և պարեցուցանէ զմանին իւրոյ. և այս ասի ամենարեւական յայտնաց արդի ողորմելի դրութեան Հնդկաստանի Հայոց Առաւել Պարսից ասէ, ուր չիք խոյ՝ անդ պանծանք այնն ի վեր ամբաստնայ զեղջիւր իւր. աւագ և քեզ Հնդկաստան, թէ ուստի ուր հասեալ այսօր վիճակ քուսաւելք քան քայս փոստգուէն իրկես :

Գէգեգ Տէր, ի բաց վարելով զաղուէսուն՝ ապականիչ այգւոյ քում : (Տես յարմարապէս, Առաւել, Գլ. Լ. համար 21) :

Արշալոյս և թղթակիցք իւր, զոր ուրաքեալ ցարդ զՀնդկաստանէ, ողբացեալ կարի սակաւութեւ և մեծաւ խնամօք, եկ արդ տես դու զյեղափոխութիւն այժմուս՝ և մտաւ զողբս անցելոյն նոցա, և մտաւ անդ հաւատաւ, զի յետ ոչ բազում աւերաց և զոր թերի աւազմունս՝ լսելոց ես ականջօք. բայց եթէ ունիցիս լրագիրքեղ ազգութարան — թէ և չունիս փոյթ ևս, լուցցես կամ ոչ :

Զարարտին լրագիրք մեր, թէ զորքան հրատարակեն, թէպէտ հազիւ երբէք պատահեալ անցը ստույթեան ի նուցա. բայց թող բանադատք բացցեն զաշնս իւրեանց ի տեսանել զլուսաւորեալ ազանց Եւրոպականաց զարդիւս, չիք զոր ինչ այսօր հրատարակեն, ի վաղիս ստեղծ զներհակն գրեն և ոչ երբէք նախատին. ըստ որում անցը ասի փոփոխանաց, և յիւրախ. զի եթէ ի սենեկէ ի սենեակ շփոթին զղոյցք, չէ հնար բացակայ և հեռաւոր վայրեաց բանից անընդունելի լինել. թերեւս այս բաղդաւորութիւն տուեալ իրօք ի բանադատս, որոց մին ասի Պ. Հէքիմեան բարեկամս մեր, ոչ ըստ հոգւոյ և ոչ ըստ մարմնոյ :

Թողումք յինչ և զնախադատութիւն Արշալոյս, թէ իրբ. արմատ առաջին, քանի՜ և որքան ընծիւղից բարեաց սպասուած և առիթ եղեալ քաջախելութեամբ և յարանմանութեամբ, որովք այսօր հեռաւորք իրբ. մօտաւորք ի լուր միմեանց սիրաշահին խնդան և հոգով միանան ի սէր. զի այս յայտնի է ամենեցուն և անտարակուսելի. այլ եթէ ի հաստուցումն չիցն իտպիտաց երախտամուտաց ինչ, քան զապտակ բամբասանաց և զրպարտանաց, այն ևս բռնական ասի մերում ունակութեան :

Իրբ. բարեկամի և մտերմի հնոյ, զանուն Գեր. Գ. Եպիսկոպոսի առարկայ կալեալ արշտէ ի հրապարակի, (թերեւս ոչ տուանց ներքին գիտաւորութեան), բայց երանի՜ թէ միով լեզուաւ և ոչ այլ և այլ — առ երեսոյս այսպէս՝ և ի թիկունսն այլ պէս. « բան չէ, մարդ չէ, կանոն եկեղեցւոյ չկիտէ. եթէ գիտնայր՝ թրաշէր զմօրուս . . . թեմաթիօք քահանային, Այվազսկին ինձ հաւատայր. զիմ խորհուրդն լսէր. բայց սա ոչ » ո՞վ թուեալեր երկնի լեզու օժի :

Միջոցեւ յաշնադատութեան

... Խմբագրապետ Տէր

Կը խնդրեմք որ բարեհաճե՛ք ի տեղեկութիւն հանրութեան հրատարակել Զեր պատուական թերթին մէջ թէ ի նշանստ գիւղիս Արամեան երկսեւ վարժարանի՝ 1876 տարւոյն 11/23 գեկտեմբերին տրուած թատերական ներկայացման զուտ հասցիլն եղած է 9249 1/2 դրշ. ընթացիկ դրամ, որ ամբողջապէս յանձնուած է Պատուարժան Թադական Խորհրդոյ :

Միամբ մեծաւ յարգանքօք ի դիմաց Յանձնաժողովոյ Ատենապետ Ատենապետ Գառնիկ Բ. Գառնիկեան Գ. Նախագահեալ 1877 յունվար 21 ի Գաւորգիւղ

Ե. Օ. Գ.

Շէրիֆ փաշա խանին վերի յարկը թիւ 7 սենեակին մէջ Անդիգերէն և Թուրքերէն լեզուաց դատաւորութիւն կրլայ շատ չափաւոր գինով և Անգղի :

* Եթէ այս և այսպիսիք եղեալ բանք բանադատին առ Եպիսկոպոսի և նորա ոչ անապեալ, զովեւք զխոհմունքիւն նորա. սակայն և այնպէս ըստ արտաքնոյ տեսութեան յարակցութիւն նոցին ընդ իրեար անպակաս, որպէս և ի միասին երկն իմն զբոսանք ձրի չողենաւաւ Արարեան պարտեաց :

այսի հմուտ դատաւոր մը որոյ գործնական մեթոտին գերազանցութիւնն իւր աշակերտաց սուղ ժամանակի մէջ ըրած զարմանալի յառաջադիմութեանէն կրնայ չափուիլ : Անգղիերէնի դասախօսութիւն կրնէ :

Թուրքերէն լեզուի դատաւորն է սոյն սենեակին վարձակալ Մեծ. Առաքել Էֆէնտի Գարամիսեան :

Ուղղը Զորքաւոր թիւ 11 Երբթ օրերը կէս օրին յիշեալ սենեակն երթալով Առաքել Էֆէնտիի հետ պետք է խօսի :

Ի Լ Ա Ն

Պէյդօղ Գալկիլիսանէ անպարընա մահճուղ Նիւմուսէյէրի վէճէլէ միւսայեալ օրուհաճաք 40,000 քրոյն եէրի թօքմաղլանմը յիշեալէ ինչ 10000 ատէտ եէրի իմալի սիհաճ վաքթանըն պահասը մաքսուղ սէնէտէրի վերուտիտէ պէր վէճէլի փէշին սիմ մէճիտիյէ 20 դրշա օլարաք վէ սիմ մէճիտիյէ վէրիլմէզսէ փիեացա ֆիեաթըլլա ֆարքը պիլ հիսապ քալիմ օլարաք Նիզամիյէ խաղիկէսիտէն վէրիլմէք շարթըլլա մէքըիւր քէօսեղէնի պէհէր քրոյսի 23 վէ վաքթանըն պէհէր քրոյսի 30 դրշա օլարաք թալիպի Էօհտէսիտէ օլուպ ֆեանուէրի րումիլին երկու ալթընճը չէհարչէնպիհ կիւնի քարալը քալիսի վէրիլմէճէիտէն, իմալիմէյէ թալիպ օլանլարըն եէվիլ մէքըիւրտէ Տարը Շուրայի տաքէրիյէ իկէլմէլէրի :

20 ֆեանուէրի սանի 1877 Պապը Սէրասքէրի

Առաքելի շահանէ իշուս տօքսան իքի սէնէսի շուպաթը իպթիտարընտան Նիհայէթինէ գատար լիւղումի օլան եիւղպիտէն եիւղ էլիլ պին դըյէյէ գատար սըղըր լահմիլըն պէհաալ սիմ մէճիտիյէ իկիլմի դրուշա օլարաք մալիյէ խաղիկէսիտէն թէհէտիյէ վէ իմա գըլլէմաթ շարթըլլա ինչ, պէհէր քրոյսի ալթըր իկիլմի տօքուղ փարայա օլարաք թալիպի Էօհտէսիտէ տէ օլուպ ֆեանուէրի սանի րումիլին իկիլմի պէշինճի սալը կիւնի սաաթ եէտիտէ գարալը գաթիսի վէրիլմէճէլիտէն, իմա իմէլէլ թալիպ օլանլարըն եէվիլ մէքըիւրտէ վէ չէրայիլթի պիլմէք իսթէյէնլէրին տահա էվէլմէ Տարը շուրայի տաքէրիյէ կէլմէլէրի :

17 ֆեանուէրի սանի 1876 Պապը Սէրասքէրի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՌԱՋՈՐԴ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Նիւմուսէ Գառնիկեան Գ. Նախագահեալ

ԵՐԿԱՍԻՐՆՑ

Ի. Գ. Արապեան

Այս ամենակարեւոր գիտութեան սկզբունքները ժողովրդեան ամէն հարգերուն մէջ տարածելու և միանգամայն ազգային վարժարանաց նախնական դասերու յարմար դասագրքի մը պակասութիւնը լի վաղուց անտիղաքի եղած էր : Ահա այս պակասը լեցուց այս անգամ Մեծ. Միսալի Էֆէնտի Արապեան երկասիրելով և հրատարակելով սոյն կարեւոր մատենիկը որ վերջիշեալ կրկին նպատակներուն խիստ լաւ կը ծառայէ :

190 երեսնէ բաղկացեալ և 38 փորագրեալ գեղեցիկ պատկերներով զարդարուած է :

Կը գտնուի Էֆէնտի Զիլինկիլթի ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և իսղմանեան գրատունը և ուրիշ գրալիւծաւաց քով Գին 1 ֆրանք :

